

# **ՏԵՍԵՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

## **ՄԱՆՈՒԿ ՄՈՎԱԽՍՅԱՆ**

*ՀՊՏՀ վիճակագրության ամրախոնի  
դրույթը, անհետագիտության բեկածու*

## **ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Արդյունավետ աշխատանքային գործունեության շահադրդման մեխանիզմի ձևավորման գործընթացում կարևոր դեր ունեն նվազագույն աշխատավարձը (այսուհետ՝ ՆԱ), դրա սահմանման սկզբունքները և չափորոշիչները, հաստատնամ կարգը և գործնական կիրառությունը։ Ինչպես ցույց է տալիս համաշխարհային և հայրենական փորձը, այս խնդիրները բավականին բարդ են ու հակասական, հետևաբար՝ պահանջուն են մշտական ուշադրություն ինչպես գիտական աշխատողների, այնպես էլ առջալական գործընկերության բոլոր մասնակիցների կողմից։

Այս հիմնախնդրի արդիականությունը նախևառաջ պայմանավորված է ՆԱ-ի՝ անցումային տնտեսություններում ունեցած նշանակալի դերակատարությամբ, երկրորդ՝ տնտեսագիտական գրականությունում պատշաճ կերպով բացահայտված չեն դրա կարգավորման մեխանիզմները և չափորոշիչները, ինչպես նաև ՆԱ-ի՝ որպես աշխատութիւն մրցունակության և աշխատանքի շահադրդման գործոնի նշանակությունը<sup>1</sup>։

Այս ոլորտում գործունեության կարևոր ուղղություններից է համարվում ՆԱ-ի բարձրացման համար նովող պայքարը, ինչը գործնականում իրականացվում է Արհմիությունների համբողիանուր կոնֆեներացիայի կողմից։ Այդ պայքարի շրջանակներում նպատակ է դրվել ԱՊՀ երկրներում ՆԱ-ը հավասարեցնել կենսապահովման նվազագույն բյուջեի (նվազագույն սպառողական բյուջե) մեծությանը։ Այսօր ԱՊՀ երկրներում աշխատանքի վարձատրության ոլորտում պետական երաշխիքի որոշման համար ընտրված է այս չափորոշիչը։

Վերջին ժամանակներս ԱՊՀ առանձին երկրներում, այդ թվում՝ արհմիությունների միջավայրում, ՆԱ-ի հաշվարկման չափորոշչի փոփոխության վերաբերյալ առաջարկություններ են արվում։ Դրանցից մեկը ՆԱ-ի՝ միջին աշխատավարձի նկատմամբ տոկոսով սահմանումն է։

Խիստ արդիական է դաշնում ՆԱ-ի սահմանման՝ աշխարհում գոյություն ունեցող չափորոշիչների վերլուծությունը, ժամանակակից փուլում ԱՊՀ երկրներում դրանց կիրառման նպատակահարմարության որոշումը,

<sup>1</sup> Տե՛ս Занятость, рынок труда и социально-трудовые отношения /под ред. Колосовой Р., Меликъяна Г./. М., „Течс”, 2008, էջ 78:

ինչպես նաև ընտրված չափորոշչի հաշվարկման մեթոդաբնության վերլուծությունը:

Համաշխարհային պրակտիկայում կարելի է առանձ նաց նել ՆԱ-ի սահմանման երկու հիմնական մոդել: Առաջին մոդելի շրջանակներում ամբողջ տնտեսության համար գործում է աշխատած ժամանակի (ամիս, օր, ժամ) հաշվով հաշվարկված ՆԱ-ի միասնական չափ: Երկրորդ մոդելի դեպքում երկրում չկա աճրող տնտեսության համար սահմանված ՆԱ-ի միասնական չափ: այդ մեծությունը որոշվում է տնտեսության առանձին ճյուղերի մակարդակով:

Այս մոդելներից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները: ՆԱ-ի միասնական չափը համարվում է որոշակի երաշխիք, որ տնտեսությունում չեն լինի «գորշ գոտիներ»: Այս մոդելի հիմնական առավելություններից մեկն այն է, որ հեշտաց նում է ՆԱ-ի և պետական կարգավորման նյութ ցուցանիշների համեմատությունը, ինչպես նաև հեշտ է աշխատանքին այս չափորոշչի և ներդնումը, և դրա նկատմամբ հսկողության իրականացումը: Միաժամանակ, այս մոդելի շրջանակներում դժվար է հաշվի առնել տնտեսության առանձին հատվածների և ոլորտների զարգացման առանձ նահատկությունները:

Այս խնդիրն առավել արդյունավետ կարելի է լուծել ՆԱ-ի սահմանման երկրորդ մոդելի շրջանակներում: Սակայն այստեղ առաջանում է ՆԱ-ի շերտավորման զգալի վտանգ և, որպես հետևանք՝ կառուցվածքային անհամանանությունների սրացում:

Ինչ վերաբերում է ՆԱ-ի սահմանման չափորոշչիներին, ապա առավել տարածված է երկու եղանակ: Առաջինի դեպքում հաշվարկը բխում է պարենային, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների նկատմամբ տնային տնտեսությունների պահանջմունքներից: Այս նպատակով պետություններում նշակվում են «սպառողական զամբյութներ», որոշվում է դրանց արժեքային արտահայտությունը, սահմանվում են նվազագույն սպառողական բյուջեի կամ կենսասպահովման նվազագույն մեծության չափերը, որոնք ել որպես չափորոշչի են ծառայում ՆԱ-ի հաշվարկման համար:

Անշուշտ, ՆԱ-ի որոշնան այս չափորոշչի առավելությունն այն է, որ ակնառու են այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք կարող են ձեռք բերվել աշխատողների կողմից, և կարելի է պատասխանել այն հարցին, թե կարո՞ղ է աշխատողն ապրել ու պահպանել իր աշխատունակությունը՝ ստանալով այդ չափի աշխատավարձ: Սակայն այս եղանակը աշխատատար է, նաև առաջարկությունները պետք է հաշվարկեն սենյամքերի նորմատիվները, հագուստի և կոշիկի օգտագործման ժամկետները, հետևեն «սպառողական զամբյութ» կազմում ընդգրկված ապրանքների և ծառայությունների գներին, նշակեն «զամբյութ» հաշվարկման մեթոդաբնություն և այլն:

Այս առումով, բավականին զայրակղիք է համարվում ՆԱ-ի սահմանման երկրորդ չափորոշչը. տոկոսով՝ միջին աշխատավարձից: Այստեղ ակնհայտ է հաշվարկման պարզությունը, միջազգային համեմատությունների հնարավորությունը ոչ թե ըստ բացարձակ, այլ ըստ հարաբերական ցուցանիշի (Կեյցի ինդեքս - նվազագույն աշխատավարձի հարաբերություն-

նը միջին աշխատավարձին), ուղղակի կապը երկրում ձևավորված կենսանակարդակի հետ: Սակայն այս չափորոշով ՆԱ-ի սահմանմանը տեսանելի չէ, թե աշխատողն այդ աշխատավարձով իրականում ինչ կարող է ձեռք բերել, այդ միջոցները բավարա՞ր են պահպանելու աշխատունակությունը:

ՆԱ-ի և միջին աշխատավարձի նակարդակների հարաբերության ցուցանիշը, ըստ առանձին երկրների, էականորեն տարբերվում է: Արևանյան Եվրոպայի երկրներում հարաբերակցությունը կազմում է 50 և ավելի տոկոս<sup>2</sup>: ԱՄՆ-ում 1938 թվականին «Արդարացի աշխատանքի մասին» օրենքի ընդունումից հետո ընկած ողջ ժամանակահատվածում ՆԱ-ի և միջին աշխատավարձի հարաբերակցությունը ցածր է եղել Եվրոպական միջին մակարդակից՝ կազմելով է միջին աշխատավարձի մեկ երրորդը: Ըստ ՆԱ-ի հարաբերական մակարդակի՝ ՏՀՁԿ երկրներից վերքին տեղերը գրանցում են առավել բոյլ զարգացածները. Կորեան, Մերսիկան և Թուրքիան, որտեղ այդ ցուցանիշը 20-22% է կազմում: Զարգացող և անցունային տնտեսությամբ երկրներում ևս այս ցուցանիշը գտնվում է ցածր մակարդակի վրա:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ շատ երկրներում, հատկապես՝ մայրցանաքային Եվրոպայի, ՆԱ-ի սահմանման ժամանակակից չափորոշիչ կիրառմանն անցան այն ժամանակ, երբ դարձել էին համընդհանուր բարեկեցության պետություններ, երբ այստեղ գործում էին հզր և ազդեցիկ արիեստակցական միություններ, երբ պետությունները, տնտեսական աճի բարձր տեմպերի պայմաններում, ՆԱ-ի ինստիտուտի կիրառումը համարեցին աղքատության նվազեցման արդյունավետ գործիք: Համաձայն Եվրոպայի սոցիալական խարտիայի՝ Եվրոպական շատ երկրներում ՆԱ-ն հասել է կենսաապահովման նվազագույն մեծության 1,5-2,5 մակարդակին: Այսպես՝ Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում ՆԱ-ն ավելի քան 1,5 անգամ զերազանցում է կենսաապահովման նվազագույն մեծությանը, Հոլանդիայում՝ մոտավորապես 2 անգամ: Այս իմաստով լինվին իմանավորված կարելի է համարել այս չափորոշիչ կիրառությունը ՆԱ-ն սահմանելիս: Ընդ որում, եկամուտների (աշխատավարձի) էական շերտավորումից խուսափելու նպատակով, համաձայն Սոցիալական իրավունքի Եվրոպական կոմիտեի դրույթների, Եվրովիտրյան երկրներում ՆԱ-ի նակարդակը պետք է ազգային տնտեսության միջին աշխատավարձի 60%-ը կազմի: Համապատասխան մեծություննը կարող է նվազել մինչև 50%-ը<sup>3</sup>, եթե այդ դեպքում պետությունները կապահովեն արժանավայել կենսանակարդակ:

Համեմատաբար ցածր կենսանակարդակ ունեցող երկրներում (Մերսիկա, Հնդկաստան, Ռուսակայ, Բուլղարիա, Բրազիլիա, Արգենտինա, Չիլի), որտեղ ՆԱ-ի սահմանման իմանական չափորոշիչը ոչ թե կենսաապահովման նվազագույն մեծությունն է, այլ միջին աշխատավարձի նկատմամբ ձևավորված հարաբերակցության մակարդակը, նկատվում է Կեյցի ինդեքսի ամենացածր մակարդակը, և ՆԱ-ն էականորեն զիջում է կենսաապահովման նվազագույն մեծությանը:

<sup>2</sup> Տես **Ронк В.**, Утверждена новая потребительская корзина: насколько улучшится жизнь россиян?, М., „Человек и труд”, 2006, №5, էջ 21:

<sup>3</sup> Տես նոյն աեղը, էջ 22:

ՆԱ-ի սահմանան համար ԱՊՀ երկրներուն կիրառվուն են նվազագույն սպառողական բյուջեի կամ կենսաապահովման նվազագույն մեծության չափորոշիչները: Սա ունի պատճական նախադրյալներ:

ԽՍՀՄ-ում ՆԱ-ի մակարդակի իիմնավորման համար կիրառվել են նյութական ապահովման տարրեր մակարդակների սպառողական բյուջեներ՝ նվազագույն, միջին և ռացիոնալ: Նվազագույն սպառողական բյուջեի մշակումը սկսվել է դեռ անցած դարի 50-ական թվականների վերջին: Որոշվել է, որ ՆԱ-ն պետք է 1.5 անգամ գերազանցի նվազագույն սպառողական բյուջեի մեծությանը, որպեսզի ապահովվի աշխատող վերարտադրությունը և երեխայի (խնամառու) խնամքը: Այսպես՝ 1965 թ. նվազագույն սպառողական բյուջեն սահմանվել է 40 ռուբի, իսկ ՆԱ-ն՝ 60 ռուբի, 1975 թ., համապատասխանաբար՝ 50 և 70 ռուբի, իսկ 80-ականների վերջին ՆԱ-ն կազմել է 80 ռուբի<sup>4</sup>: Այդ ժամանակահատվածուն հաշվարկվել է նաև նվազագույն նյութական ապահովվածությունը, որը նվազագույն սպառողական բյուջեից փոքր է եղել:

Այնուամենայնիվ, նվազագույն սպառողական բյուջեն օրենքով չի հաստատվել, թեև մշտապես հաշվարկվել է: Պաշտոնապես նվազագույն սպառողական բյուջեն իրավական կարգավիճակ ձեռք է բերել միայն 1991 թ., եթե ԽՍՀՄ նախագահի կողմից ստորագրվել է «Նվազագույն սպառողական բյուջեի մասին» հրամանը: Ահա այսպես է «ծնվել» նվազագույն սպառողական բյուջեի որոշումը, որը, սակայն, ԽՍՀՄ փլուզման պատճառով գործնականուն չկիրառվեց:

Բելառուսը, Ռուսաֆինան, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան և Ալբրեցանը, ձեռք բերելով ինքնուրույնություն, մշակեցին և ընդունեցին (1991-1993 թթ.) իրենց ազգային օրենսդրությունները՝ նվազագույն սպառողական բյուջեների մասին, որոնք հետագայում մի քանի անգամ վերանյալեցին:

Ընդ որում, հաշվի առնելով անցած դարի 90-ական թվականների բարդ սոցիալ-տնտեսական իրավիճակը, մի շարք պետություններ ՆԱ-ն հաշվարկել են՝ հիմք ընդունելով այլ չափորոշիչներ. մասնավորապես՝ աղքատության շեմ (Ռուսաֆինա, Մոլդովա), բազային պաշտոնային դրույքափ (Ղազախստան, Ղրղզստան), կենսաապահովման նվազագույն մեծություն (Ռուսաստան): Հայաստանուն և Տաջիկստանուն ՆԱ-ն որոշվում է փաստացի ճամապարհով:

Ներկայումս ԱՊՀ երկրներուն ՆԱ-ի սահմանան չափորոշիչ է համարվուն հաշվարկվող կենսաապահովման նվազագույն մեծությունը (նվազագույն սպառողական բյուջե): Բելառուսի, Ռուսաֆինայի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի աշխատանքային օրենսդրություններուն ամրագրված է, որ ամսական նվազագույն աշխատավարձը չի կարող փոքր լինել կենսաապահովման նվազագույն մեծությունից: Սակայն, չնայած գոյություն ունեցող երաշխիքներին, ԱՊՀ շատ երկրներուն այդ հարաբերակցությունը չի պահպանվում: Միայն 2009 թ. հունվարի 1-ին է Ղազախստանուն ՆԱ-ն հասել կենսաապահովման նվազագույն մեծությանը: Ալբրեցա-

<sup>4</sup> Տես՝ նույն աեղը:

նում, Բելառուսում, Ուկրաստանում և Ուկրաինայում ՆԱ-ի կազմել է աշխատունակ տարիքի բնակչության կենսապահովման նվազագույն մեծության 80-90 տոկոսը, Ղրղզստանում և Մոլդովայում, հաճապատաժանարար՝ 8 և 46 տոկոսը:

Թեև ՀՀ Ազգային ժողովի կողմից 16.03.2004 թ. ընդունված «Կենսապահովման նվազագույն զանբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ կենսապահովման նվազագույն բյուջեն պետք է հիմք ծառայի նվազագույն աշխատավարձի մեծության սահմանման համար, սակայն մինչև օրս օրենքի այդ հոդվածը չի կիրառվում:

#### **Աղյուսակ 1**

#### ***Սահմանված նվազագույն աշխատավարձի և նվազագույն սպառողական զանբյուղի հարաբերակցությունը ԱՊՀ երկրներում (%)<sup>5</sup>***

Տրկրներ	Տարեթիվ	2006	2007	2008	2009	2010	2011
Հայաստան*	69.6	86.3	99.3	115.9	102.3	104.8	
Աղբեջան	60.3	78.1	100.0	89.3	97.7	98.0	
Ուկրաինա	32.1	59.8	50.1	84.0	76.1	78.2	
Բելառուս	95.5	101.3	99.9	92.4	94.0	94.9	
Ղազախստան	109.4	101	91.2	100.0	110.9	108.7	
Ուկրաինա	79.2	81.0	81.5	100.0	100.0	100.0	

Աղյուսակ 1-ի տվյալներից ակնհայտ է դաշնում, որ 2008-2010 թթ. նշանակած հարաբերակցության մակարդակը գրեթե բոլոր երկրներում (բացառությամբ Ուկրաստանի), կազմում է 90-100 տոկոս: Սակայն համեմատության համար նշենք, որ սահմանված նվազագույն աշխատավարձը 2009 թ. Հայաստանում կազմել է 82.6, Աղբեջանում՝ 93.8, Ղազախստանում՝ 92.1, Ուկրաստանում՝ 136.7, Ուկրաինայում՝ 95.5, Բելառուսում՝ 90.1 ԱՄՆ դրամ, իսկ 2010 թ., հաճապատաժանարար՝ 85.1, 106.3, 101.5, 140.9, 116.1 և 86.4 ԱՄՆ դրամ:<sup>6</sup>

Այսինքն՝ այսօր մի շարք երկրներում սահմանված ՆԱ-ի մակարդակը չի ապահովում աշխատողի ֆիզիոլոգիական կենսունակությունը:

Դիտարկվող ժամանակաշրջանում ԱՊՀ երկրներում սահմանված ՆԱ-ի և միջին աշխատավարձի հարաբերակցության մակարդակները կազմել են 10-40 տոկոս (աղյուսակ 2):

<sup>5</sup> Տե՛ս Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ ԱՎԾ, Եր., 2012, էջ 167: ՀՀ սոցխալիզմ պասկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ, Եր., 2012, էջ 41, Рынок труда в странах СНГ, Статкомитет СНГ, М., 2012, էջ 86, 92:

<sup>6</sup> Հաշվարկված է աղքատության ընդհանուր զծի նկատմամբ:

<sup>6</sup> Տե՛ս Рынок труда в странах СНГ, Статкомитет СНГ, М., 2012, էջ 92:

## Աղյուսակ 2

### **Սահմանված նվազագույն աշխատավարձի և միջին աճսական աճվաճական աշխատավարձի հարաբերակցությունը ԱՊՀ երկրներում (%)<sup>7</sup>**

Տրկրներ	Տարեթիվ	2006	2007	2008	2009	2010	2011
Հայաստան*	24.1	26.9	28.6	31.2	29.2	30.1	
Աղբբեջան	23.5	23.2	25.5	25.2	25.6	25.9	
Ռուսաստան	10.3	16.9	13.3	23.2	20.7	21.0	
Բելառուս	27.3	26.8	25.3	23.4	21.2	21.4	
Ղազախստան	22.6	18.6	18.5	20.2	19.3	19.5	
Ուկրաինա	38.4	34.0	30.2	39.0	41.2	41.3	

Հարկ ենք համարում նշել, որ 2010 թ. միջին աճսական աշխատավարձը Հայաստանում կազմել է 291.3, Աղբբեջանում՝ 414.4, Ռուսաստանում՝ 681.6, Բելառուսում՝ 406.6, Ղազախստանում՝ 526.7, Ուկրաինայում՝ 282.0 ԱՄՆ դոլար, իսկ 2009 թ., համապատասխանարար՝ 264.3, 372.5, 588.3, 350.2, 456.4 և 244.7 ԱՄՆ դոլար<sup>8</sup>:

Ժամանակակից փուլում, երբ ԱՊՀ գրեթե բոլոր երկրներում պահպանվում է ցածր կենսամակարդակը, կենսաապահովման նվազագույն մեծությունը 2-3 անգամ զիջում է միջին աճսական աշխատավարձի մակարդակը: Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է վերանայել նվազագույն աշխատավարձի սահմանման չափորոշչի հարցը՝ կենսաապահովման նվազագույն մեծությունից անցում կատարել միջին աճսական աշխատավարձի չափորոշչին: Երբ ԱՊՀ երկրներում կենսաապահովման նվազագույն մեծությունը հավասարվի կամ գերազանցի միջին աճսական աշխատավարձի 55-60%-ը, այս դեպքում միայն կարելի է նվազագույն աշխատավարձը սահմանել «կենսաապահովման նվազագույն մեծություն» չափորոշչի հիման վրա: Մակայն մինչև այդ չափորոշչին անցնելը, ներկայումս պետք է հաշվարկել կենսաապահովման նվազագույն մեծությունը, պայքարել հաշվարկման մերողարանության կատարելազգործնան համար, համարել «սպասողական զանբյութի» կազմը, մեծացնել նորմաները, նորմատիվները և այլն: Հարկ է ճանաչել նաև նվազագույն սպասողական բյուջեի չափորոշչի հաշվարկման մասին, որն ավելի բարձր բավարարվածության բյուջե է, ինչը հնարավորություն է տալիս ապահովելու աշխատողի և նրա ընտանիքի անդամների արժանապատիվ կենսամակարդակը:

Կարծում ենք՝ նման մոտեցումը համապատասխանում է Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 131 կոնվենցիայի և թիվ 135 հանձնարարականի պահանջներին. ՆԱ նակարդակը սահմանելիս առաջարկվում է օգտագործել մի շարք չափորոշչեր՝ առաջնությունը տալով «փարձու աշխատողի և նրա ընտանիքի անդամների պահանջնություններին», ապա միայն՝ «աշխատանքի վարձատրության ընդիւանուր մակարդակին»:

<sup>7</sup> Տես նույն տեղը, էջ 92, 94:

\* Հաշվարկված է աղքատության ընդիւանուր գծի նկատմամբ:

<sup>8</sup> Տես Рынок труда в странах СНГ, նշվ. իրաւ., էջ 92, 94:

**МАНУК МОВСИЯН**

*Доцент кафедры „Статистики”*

*АГЭУ, кандидат экономических наук*

***Критерии определения минимальной заработной платы в странах СНГ.-*** Данная статья касается критерий определения минимальной заработной платы в странах СНГ, раскрытию их недостатков и достоинств.

**MANUK MOVSISYAN**

*Associate Professor at the Chair of  
„Statistics” at ASUE, PhD in Economics*

***Criteria of Defining Minimal Salary in the CIS Countries.-*** This article deals with the norms of salary definition in CIS countries and with revealing their advantages and disadvantage.